ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.10-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Աշոտյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 2 (երկու) հայտ՝
   - «Անտարես» ՍՊԸ-ի,
   - «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «Անտարես» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.4. կետի պահանջներին:

Մասնավորապես՝

ներկայացված հայտի տեխնիկական չափորոշիչներ բաժնում բացակայում է Ծրագրի նախատեսվող իրականացվելիք գործողությունների ժամանակացույցը, ինչպես նաև ծրագրում ներգրավվող մասնագետների ցանկը և ինքնակենսագրականները ստորագրված և կնքված չեն:

Մեկի՝

- «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի համար սահմանված չափորոշիչներին:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «Անտարես» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ **«Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն:**

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման համար՝

- **«Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** հետ՝ **16.386.000** (տասնվեց միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Աշոտյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____